

**ՌՈՐԻՆ ԶՈՐՋ ՔՈԼԼԻՆԳՎՈՒԴԻ
«ԱՐՎԵՍՏԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ» ԿԱՄ ՃԻԳԵՐ՝
«ՐՈՒՆ ԱՐՎԵՍՏԸ» ԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՒ**

Ռ. Ի. Քոլլինգվուդը (1889-1943) աչքի ընկնող բրիտանացի փիլիսոփա է, հնագետ: Հայրը հնագետ էր, արվեստագետ, նշանավոր արվեստաբան ու քննադատ Զոն Ռյոսկինի անձնական քարտուղարն ու կենսագիրը, մայրը՝ նկարիչ և հայտնի դաշնակահար:

Քոլլինգվուդի խոր փիլիսոփայական անգլիական կրթվածությունը շաղախված էր իտալական և գերմանական նշանավոր դպրոցների հետ հատկապես Բենեդեկտտո Կրոչեի, որի 1913 թ. «Ջանքատտիստա Վիկոյի փիլիսոփայությունը» և այլ երկերին է թարգմանել անգլերեն:

Հայտնի է իտալացի գրականագետ, էսթետ-փիլիսոփա Կրոչեի ինտուիցիայի տեսության մեծ ազդեցությունը XX դարի ոչ միայն էսթետիկական, այլև լեզվաբանական մտքի վրա տարբեր երկրներում: Թերևս դրա պատճառն այն է, որ Կրոչեն և արվեստը, և լեզուն դիտում է իբրև արտահայտություն, որ ստեղծվում է որոշակի պահի և որոշակի կամ եզակի զգայական-երևակայական գիտակցության կայացման պայմաններում: Իսկ նման կայացման համար հական է հուզական գործունեությունը Կրոչեն արվեստի արարման խթանը համարում է զգայա-հուզական տվյալ վերապրումը, որը ձև է ստանում երևակայության միջոցով. և դա հենց ինտուիցիան է կամ արտահայտությունը: Ահա այս հիմնական միտքն է, որ Կրոչեին թույլ է տալիս գեղարվեստական գործունեությունը անջատել մարդկային մյուս գործունեություններից:

Կրոչեի արծարծած բազմապիսի էսթետիկական հարցերը և

մարդկային մյուս գործունեություններինց զեղարվեստական գործունեության առանձնացման Հնարավոր միջոցները զարգացնում է «Քուլինգվուդը» փորձելով տարբերել բուն արվեստը այսպես կոչված արվեստներից (արվեստը որպես մոդուլյուն, որ հավասար է քարոզչության կամ պրոպագանդայի, արվեստը որպես զվարճանք, այն է՝ նպատակադրված արվեստ որոշակի հույզեր հարուցելու կամ լիցքաթափելու համար կամ միմեսիսի-նմանակման արվեստ):

1920-30-ական թթ. անգլիալեզու զեղարվեստական գրականությունը մեծ վերելք էր ապրում: Ծնունդ էր մնացել այսպես կոչված «փոփոսկրն աշտարակի» քաղցրալեզու պոեզիան՝ պրեռաֆայելիտներ, Սուինսերն, Վալտեր լա Մար և ուրիշներ: Օսկար Ուայլդի «Մեդիդեի բանտի մասին» բալլադը նոր խոսք էր այդ Հղկված նեոռոմանտիկ պոեզիայում կենդանի դրամատիկ խոր զգացմունքներով, որ անդրադարձնում էր կյանքի և մահվան, ոճրի և պատժի այսպես ասած «սահմանային իրադրությունը»: Քիփլինգը ճեղքում էր զեկադանսը զաղութային գինվորների կյանքի իրական պատկերներով, Ջոյսը իռլանդական մայրաքաղաքի մի քանի քաղաքացիների գորշ կյանքը հասցնում էր առասպելական նշանակալիություն, պատերազմական պոետները և էլիոթը շոշափում էին իմպերիալիզմի առաջ բերած խոր վերքերը, Օքսֆորդի պոետները՝ Օդլն, Սպենդեր և ուրիշներ, պոեզիան թարմացնում էին նոր ութմերով և չափերով՝ բարձր պոեզիա ներմուծելով առօրյա կյանքի պրոզայիկ բեկորները, իռլանդացի Նյթսը կենդանացնում էր իռլանդացիների մեջ քնած կելտական իրական ոգին, Դիլան Թոմասը վալիական ռոմանտիկ ոգին հարստացնում էր նոր ոճերով ու բանաստեղծական դարձվածքներով, չխոսելով ամերիկյան «կորուսյալ սերնդի» աննախադեպ կենդանի ու ինտելեկտուալ արձակի մասին: Նույնպիսի երևույթներ տեղի էին ունենում բրիտանական և ամերիկյան կերպարվեստում:

Ստեղծագործող այս նոր սերնդի արթնացումը ինչ որ պարզաբանում էր պահանջում արվեստի էության մասին, և այդ գործին է ծառայում «Արվեստի Հիմունքները»՝ աշխատություն-

* Ռ. Ջ. Քուլինգվուդ. «Արվեստի Հիմունքները», Եր., Մարգիտ Խաչենց Փրինսիփո, 2007, 424 էջ: Թարգմանությունը անգլերենից և առաջաբանը Վիգեն Ղազարյանի:

նը՝ լույս տեսած 1937 թ.: Այն ծնվել է կյանքի թելադրանքով, և որքան էլ Հեղինակը մաքուր փիլիսոփա էր, որ ձգտում էր պահպանել փիլիսոփայական դաշտի անաղարտությունը բնական գիտությունների, Հոգեբանության, տեխնիցիզմի, սցիննատիստական կամ գիտության ընտրյալներին Հասանելի փիլիսոփայական նոր «ժարգոնից», կյանքը ստիպեց, որ նա իր վերաբերմունքը ցույց տա «արվեստ» երևույթի նկատմամբ, այն խնամքով մաքրել վրադիր շերտերից:

Կրոչեն դա արել էր իր բանավիճային դրժով, քննելով ու քննադատելով դրեթե բոլոր էսթետիկական տեսությունները՝ գեղեցիկի, Համապրման, Հոգեբանական, Ֆորոյդիստական, նմանողական (միմետիկ) և այլ տեսություններ իր «էսթետիկայի» պատմական Հատվածում, ցույց տալով, թե էսթետիկան ինչպես է Պլատոնի, Արիստոտելի, Վիկոյի, Ղյումի, Կանտի, գերմանական արվեստագիտական Ֆորմալ դպրոցի և այլ մեծ փիլիսոփաների ու Հետազոտողների շնորհիվ Հասցվել իր գաղափարներին՝ արվեստն իր և արտահայտություն, լեզու և երևակայություն: Քուլինգովուդը դիմում է բանավեճի միայն արվեստի մասին, իր կարծիքով, սխալ ըմբռնումները և թյուրիմացությունները կանխելու Համար, այսինքն ձգտում է առաջին Հերթին Հասնել մի գիրքորոշման, երբ վստահաբար կարելի է ասել. «այս, այս, այս արվեստ է», իսկ «այն, այն և այն արվեստ չէ», այսինքն Հասկացությունը ազատել երկիմաստություններից: «Ներածության» մեջ նա տարբերում է փիլիսոփայության Հակված արվեստագետներին գեղարվեստական ճաշակ ունեցող փիլիսոփաներից: Առաջինները, օրինակ Վինկելմանի, Գյոթեի, Ռյոսկինի, Վենտուրիի տիպի մարդիկ, տարբերում են բուն արվեստը կեղծից, բայց չեն կարողանում դա Հիմնավորել: Փիլիսոփաները Հոյակապ գործածում են իրենց տրամաբանական զինանոցը, բայց չգիտեն՝ ինչի մասին են խոսում, քանի որ նրանք Հենվում են մի քանի դասականներից քաղած ընդհանրացումների վրա: Դա նման է այն կուրյոզային վիճակին, որ տեղի ունեցավ գերմանական դասական փիլիսոփաների ու էսթետների Հետ, երբ բանասերներն ու գիտակները, ստուգելով միայն փաստերը, դրանց ուժով ճեղքեր բացեցին դասական էսթետիկայում, և գործն ավարտվեց նրանով, որ Հեգելի էսթետիկայի ազդեցությամբ գրվեցին Համաշխարհային և եվրոպական արվեստի

պատմություններ, որոնց, սակայն, պակասում էր Եելլինգի կամ
Հեգելի հզոր ընդհանրացնող միտքը: Եվ արվեստի պատմութ-
յունը Կուլչերի, Ենասզեի, Տենի և ուրիշների մոտ վերածվեց
ժողովուրդների բնավորությունների, բարքերի, միջավայրի և
արվեստի հարաբերության պատմությունների:

Քանի որ պետք է հասկանալ ինչ է արվեստը, պետք է
սկսել «արվեստ» բառի բաղմիմաստության պատմությունից:
Այդ բաղմիմաստության մեջ կան հնացած և մեռած իմաստներ,
բայց կան և հին իմաստներ, որ «կառչում են մեր մտքից խեղդ-
վող մարդկանց նման և այնպես են դուրս մղում ներկա իմաս-
տը, որ մենք կարող ենք դատորոշել մանրազնին վերլուծութ-
յամբ» (ներածության «Համակարգված բաղմիմաստություն»
ենթադրույթ):

Արվեստի հին իմաստներից մեկը արհեստն է, որ նշանակում
է ինչ-որ հումքից ինչ-որ միջոցներով ինչ-որ բան է պատրաստ-
վում որոշակի նպատակի համար: Դա արվում է որոշակի ծրագ-
րով: Հետևաբար արհեստի արտադրանքը պետք է համապա-
տասխանի իր ծրագրին և ծառայի իր նպատակին: Հակառակ
դեպքում դա վատ արհեստ է:

Նույնը չի կարելի ասել բանաստեղծության մասին: Արվես-
տի նույնացումը արհեստի հետ Քոլլինգվուդը համարում է
«արվեստի տեխնիկական տեսություն» և իր մտքի ողջ փայլը
գործադրում է այդ տեսությունը խորտակելու համար, որ սխե-
մատիկորեն կարելի է այսպես ներկայացնել: Տերյանը «Իմ հո-
գին ծովերում անծանոթ/ մենավոր և մոլոր մի նավակ», Նա-
րեկացին «Ակն ծով ի ծով ծիծաղախիտ/ ծաւալանայր յառաւո-
տուն» բանատողերում նախապես չէին կարող ծրագրել «օ»
ձայնավորի կամ «ծ» բաղաձայնի գործածության օպտիմալ թի-
վը. նույնը անգլիական պոեզիայում վերաբերում է Բեն Ջոնսո-
նին կամ Սուիներենին: Այսինքն ասոնանսի կամ ալիտերացիա-
յի այնպիսի գործիքավորում, որ հատուկ հուզական տրամադ-
րություն կամ տոնայնություն ստացվի: Նրանք իրենց զգացու-
մից են ծնել այս կամ այն ասոնանսը կամ ալիտերացիան: («Իմ
մեծ ցավից ես ստեղծել եմ փոքրիկ երգեր»), - ինչպես ասում
էր Հայնեն:

Տեխնիկական ծառայում է թե՛ արհեստին, թե՛ արվեստին: Բայց
տարբերութունն այն է, որ արհեստավոր դառնում են, իսկ

արվեստագետ ծնվում: Արվեստի այն գործերը, որոնք փորձված Հույզեր են մարմնավորում որևէ պրոպագանդիստական կամ զվարճանքի նպատակի համար, արհեստի գործեր են: Այլ բան է, որ արվեստի գործը ևս կարող է օգտագործվել որոշ խմբերի կողմից ինչ-որ նպատակների համար: Հոգեբանական որոշակի նախատեսված ռեակցիա հարուցող արվեստն, այսպիսով, ըստ Քոլլինզվուդի, այլևս արվեստ չէ, այլ մի ուրիշ բան՝ արհեստ: Նույնը վերաբերում է «գեղեցիկին», որը արվեստին կցվեց, ըստ Հեդինակի, «օգտակար արվեստները» (արհեստները՝ Հյուսնություն, դերձակություն և այլն) «գեղեցիկ» արվեստներից տարբերելու համար: Բայց Հին Հույները «գեղեցիկ» բառը գործածում էին իբրև «սիրո սեռական հակում» (առափանք), իբրև լավ պատրաստված առարկա, լինեին Հերմեսի սանդալները, թե Ֆիդիասի արձանը, ի վերջո՝ իբրև մաթեմատիկական որոշակի կանոնների հետ կապված տեսություն և իբրև Աստծո աստիճաններից մեկը:

Մյուս հարցը արվեստն է և վերարտադրությունը (միմեսիսը), որը զալիս է դեռ Պլատոնից ու Արիստոտելից, առաջինի համար դա վատ բան է, երկրորդի համար՝ լավ:

«Արվեստը որպես մոզություն» գլխում Քոլլինզվուդը բացահայտում է, որ մոզությունը ո՛չ կեղծ գիտություն է, ինչպես պնդում էին այսպես կոչված վայրի ժողովուրդների բարբերը Հետազոտող Ֆրեդերի կամ Թեյլորի նման ազդագրագետները, ո՛չ էլ ներոզ, ինչպես կարծում էր Ֆրոյդը, պնդելով, թե մոզության «ներարկած» ամենազորության զգացումը նման է Հոգեկան Հիվանդի զգացած իր «ամենազորության» ներոզին! Մոզությունը տարբեր ծեսերի ձևով ուղեկցում է բոլոր առողջ քաղաքակրթություններին, և երբ խաբխրվում է հավատը ծեսերի զորության նկատմամբ, սկսում է խաբխրվել նաև տվյալ Հասարակությունը, ինչ տեղի ունեցավ Հռոմեական կայսրության դեպքում, երբ ծեսերի լրջությունը աստիճանաբար փոխարինվեց ձևականությամբ և ավտոմատ կրկնությամբ:

Մյուս խնդիրը արվեստի որպես զվարճանքի խնդիրն է: Մոզության դեպքում այսպես կոչված արվեստը (ըստ Քոլլինզվուդի՝ ոչ բուն արվեստը) ունի օգտակար նշանակություն, որը որոշակի մեծ նպատակի համար (պատերազմ, բարոյական իդեալներ, երաշտ, որս, շինարարություն և այլն) համախմբում

է Հասարակութեան ուժերը: Զվարճանքի դեպքում արվեստի գործը (արտեֆակտ) Հակառակ դերն է կատարում մոզուլթյան Համեմատ՝ առօրյա Հուլիերի պարպումը զվարճութեան ու վայելքի նպատակադրված միջոցներով: Դրա «էսթետիկան» օգտակարի խառնումն է Հաճելիին (Հորատիուս, «Արս պոետիկա»): Զվարճանքը խաղային իրադրութեան և ժամանցի ստեղծումն է՝ մարդկանց մեծ կամ փոքր խմբերին ու զանգվածներին դրա-դեցնելու ոչ պրակտիկ, ոչ կենսական նպատակներով, շեղելով կյանքի խնդիրներէր: Բերվող օրինակները բազմապիսի են՝ պոստնոգրաֆիայից մինչև կրկես, տրիլլերներէր մինչև իդեալական Համարվող կենսակերպի ցուցադրում: Բացի առանձին դեպքերից զվարճանքի արվեստը քայքայիչ դեր է կատարում սովյալ քաղաքակրթութեան մեջ և կարող է տեւել մի քանի տասնամյակից մինչև մի քանի Հարյուր տարի:

Ուրեմն, եթե արվեստը դառնում է մոզուլթյուն (պրակտիկ կամ օգտակար նպատակի Համար Համախմբում) կամ զվարճանք (Հուլիերի պարպում խաղային «իրավիճակներով»), ապա դա այսպես կոչված կեղծ արվեստ է՝ արհեստ:

Իսկ ո՞րն է բուն արվեստը, որ պետք է տարբերել մոզուլթյունից և՛ զվարճանքից, որոնք «կեղծ» արվեստներ են, այսինքն արհեստի տեսակներ՝ սարքված որոշակի մշակված միջոցներով որոշակի նպատակի Համար: Դա ամենևին չի նշանակում, թե դրանք վատ բաներ են կամ վատորակ: Դրանք պարզապես արվեստ չեն: Արվեստագետ, ճիշտ է, ծնվում են, բայց դա չի նշանակում, թե նա ինչ-որ վերին ոլորտներում է շրջում և նրա ոտքերը ամպոտ են Հրեշտակի նման: Եթե այդպես լիներ, ապա ոչ ոք արվեստագետին, այսինքն ստեղծագործողին չէր Հասկանա: Մյուսներից արվեստագետի տարբերութեանն այն է, որ նա այս վայրկյանին և տարբեր վայրկյանների ապրած եզակի Հուլիերը, ինչպիսիք են խինդը, զայրույթը, ամոթը, վիշտը, կիրքը և նման բաներ, կարողանում է արտահայտել որպես միմիայն այդ եզակի ամոթը, այդ եզակի վիշտը, այդ եզակի զայրույթը, այդ եզակի խինդը, այդ եզակի կիրքը: Եվ միմիայն դրա շնորհիվ է, որ նա տարբերվում է մյուս մարդկանցից, որոնք կազմում են իր լսարանը, և որոնցից ոմանք ունկնդրելով կամ տեսնելով այդ եզակի Հուլիական արտահայտութեանը, այն վերապրում են գրեթե նույնութեամբ իրենց իսկ երևակայութեան շնորհիվ:

Իսկ արվեստագետը տվյալ Հուլյը արտահայտել է, որովհետև այն դիտակցել է: Ընդ որում արտահայտված Հուլյները պետք է լինեն անկեղծ, անմնացորդ, անթաքույց: Որովհետև Հակառակ դեպքում Հուլյը կեղծվում է, փչանում: Առաջանում է «խեղձած» Հուլյ: Արվեստագետը մինչև Հուլյի դիտակցումը և վերջնական արտահայտումը չգիտի, թե ինչ է ստացվելու: Եթե դա իմանա Հուլյից առաջ, ապա կստեղծվի մոդուլյուն կամ զվարճանք, և ոչ թե բուն արվեստ: Ահա թե ինչու արվեստը «թռչնում է» փղոսկրյա աշտարակում, այսինքն՝ եթե Հատուկ ստեղծվում է ինտելեկտուալ կամ ընտրյալ նեղ միջավայրի համար: Ինդիվիդուալիզմը և արվեստի գործի անհատական լինելը տարբեր բաներ են, քանի որ արվեստի գործի անհատական կամ եզակի լինելը կապված է այն Հուլյի եզակի լինելու հետ, որն անջատվում է Հուլյերի կամ զգացումների հորձանքից:

Հատուկ պարագրաֆ նվիրված է «արարման» կամ ստեղծագործելու հարցին: Քոլլինզվուդը այդ երևույթին շատ պարզ է նայում: Աստծո արարման և որևէ բնական նյութից կամ նյութերի խմբից մարդու արարման մեջ տարբերությունը առկա է Եզնիկ Կոդրացու «Եղծ աղանդոց»-ում: Եզնիկը չի նույնացնում մարդու արարումը Աստծո արարման հետ, այսինքն մարդկային պրոդուկտը, որը ոչ թե ստեղծվում է ոչնչից (Աստված), այլ ինչ որ բանից (մարդ): Քոլլինզվուդը բանական Հատիկ տեսնում է «ներշնչման», «մուսայի» ու նման գաղափարների մեջ, որոնցից օգտվում էին Պլատոնը, պոետները, փիլիսոփաները և արվեստասերները:

Արվեստում արարումը և ստեղծագործումը կատարվում են մարդու գլխում, ի տարբերություն Եզնիկի այն տեսության, թե այն տեղի է ունենում մարդու և իրերի Հարաբերության միջոցով, այսինքն՝ մարդու ձեռքի տակ կան բնական նյութեր, որոնցից մարդը մի այլ բան է ստեղծում, մինչդեռ Աստված ստեղծում է ոչնչից: Ուրեմն բուն արվեստի գործը արարվում ու ձև է ստանում մարդու գլխում: Ինչպե՞ս:

Դրա մեխանիզմը բացատրվում է II գրքում՝ «Երևակայության տեսություն»: Ջգայություններն ու Հուլյերը, որոնք ընկալվում են միասնաբար, կազմում են, ըստ Քոլլինզվուդի, մտքի գործունեության Հոգեկան մակարդակը: Դրանք դեռևս զգացումներ են, որոնք չեն դիտակցված մարդու կողմից: Կոպիտ

ասած՝ երևակայությունը զգացումի և մտքի միջև ընկած շեմն է, ըստ Կանտի՝ սահման զգայություն և հասկացման միջև:

Քոլլինգվուդը «երևակայության» իր տեսությունը կերտելիս խուսափում է գիտական հոգեբանության բազմապիսի եզրակացություններից: Նա, ինչպես Գադամերի նման հերմենևտները, հենվում է լոկ այն տրամաբանության վրա, որ կարելի է արտածել Փրանսիական, անգլիական և գերմանական դասական փիլիսոփաներից՝ Դեկարտ, Լոկ, Բերկլի, Լյուս, Կանտ: Մտքի այդ վարպետները օգնում են, որ նա չչեղվի իր ընտրած ճանապարհից, որի վերջում գտնվում են Կրոչեն և բազմապիսի գեղարվեստական և առօրյա փաստեր, որոնք նա բերում է իր մտքերը ամրապնդելու համար: Դրա համար նա անջատում է զգացումի դաշտը երևակայության դաշտից: Դա նրան ազատում է զգայական կամ զգացումային տվյալների մասին հոգեբանների մտորումներից, դրանք փոխադրելով մի այլ ոլորտ՝ երևակայության ոլորտը: Թեև զգայություններն ու զգացումները չեն մնում, այլ մեկը մյուսին հաջորդում է կամ մեկը մյուսին հրում է «զգացումների հորձանքի» մեջ, ուշադրությունը այդ հորձանքից որսում է այն, ինչը գրավում է իրեն; և՛ հանձնում երևակայությանը, որն արդեն ոչ թե հոգեկան, այլ գիտակցական (մտքի) ոլորտին է պատկանում և ստեղծում է մտքի բաղիւսը՝ ավելի բարձր ոլորտում ինտելեկտի հետագա աշխատանքի համար: Այսինքն՝ Լյուսի «տպավորությունները» (զգացումները) ուշադրությունը վերածում է «զաղափարների»: Տեղի է ունենում այն, որ մարդը ճանաչում է իր զգացումները: Զգացումների հորձանքը և յուրաքանչյուր զգացում մարդն ընկալում է իր կամքից անկախ: Մինչև զգացումների ճանաչումը մարդը կարող է լինել դրանց իշխանության տակ (զայրույթ, վիշտ, բորբոքվածության և այլն):² Այս ճանաչման պրոցեսը Քոլլինգվուդը անվանում է զգացումների ընտելացում, այսինքն ճանաչելով իր զգացումները՝ մարդը, այդ թվում երեխան, ճանաչում է իր «եսը»: Այսինքն գիտակցության կողմից ճանաչվելով՝ զգացումները դառնում են ձեռնասուն, եթե ճիշտ ենք հասկանում Քոլլինգվուդին: Բայց մեր ուշադրության կենտրոնում ընկած ամեն զգացում և հույզ չէ, որ գիտակցությունը ճանաչելով յուրացնում է: Կան այս կամ այն չափով ճանաչված հույզեր, որոնցից գիտակցութ-

յունը հրաժարվում է: Ճանաչված Հուլզերից կամ զգացումներից հրաժարվելը Քրիստոսի համարում է «զգացումների խեղում»: Այդ «խեղումը» մարդուն հետապնդում է և կարող է առաջ բերել Հոգեկան տրամա: Դա ասես հոմանիշ է Ֆրոյդի «բարդույթների»:

Այն կեանք, որից Հուլզերը սկսում են ճանաչվել գիտակցության կողմից (երևակայություն), սկսում է գործել լեզուն: Լեզուն իր սկզբնական կամ բնիկ վիճակում երևակայական է կամ արտահայտչական, նրա ֆունկցիան Հուլզի արտահայտումն է: Այդ կենդանի լեզուն, երբ Հուլզի փոխարեն սկսում է միտք կամ դատողություն արտահայտել՝ դառնում է ինտելեկտուալացված կամ փոխակերպված լեզու: Դա արդեն մտքի կամ սիմվոլի լեզուն է, որը դալիս է մարդկանց Համաձայնությունից: Բայց իսկական կամ բուն լեզուն սկսվում է արտահայտվելուց, որի վրա կառուցվում է ինտելեկտուալացված լեզուն:

Այդ ինտելեկտուալացված լեզուն «սիմվոլի» լեզուն է: Այսօր «սիմվոլը» բազմիմաստ է համարվում, բայց նկատի է առնվում, որ լեզվում, ինչպես մաթեմատիկայում, այն ունի մի իմաստ:

Իսկ լեզվի մայր Հողը դառնում է Հոգեկան մակարդակում (զգացումներ, Հուլզեր), որոնց հորձանքը օրգանիզմում մոտորային և բիոքիմիական զանազան արձագանքներ է ստանում (վախից դժգունում, ամոթից շիկնում և այլն): Հոգեկան-զգայական մակարդակի Հուլզերի գիտակցումը արդեն գիտակցված արտահայտություն է ստանում և դառնում գիտակցված Հուլզ: Այդ գիտակցման ակտը շատերը համարում են խոսքի օրգանների գործածումը, անկախ այն բանից, թե որ ազգը բերանի խոռոչի որ մասն է ավելի շատ գործածում, նույնիսկ անկախ այն բանից, թե մարդը խոսում է ժեստերով, ձայնով, թե անհոդաբաշխ Հնչյուններով: Այսպիսով, ձայնային խոսքը լեզվի մի դրսևորումն է միայն: Այսպիսի լեզուն Հուլզերի գիտակցված արտահայտությունն է ոչ միայն խոսքով, այլև պարով, առարկաներով, երգով, որոնց շնորհիվ Հուլզերը յուրացվում են գիտակցության մակարդակում: Այսպիսով, «այն, ինչ Հոգեկան մակարդակից բարձրանում է գիտակցական մակարդակի, գիտակցության աշխատանքով տպավորությունից վերածվում է գաղափարի, զգայության օբյեկտից՝ երևակայության օբյեկտի (գիրք II «Լեզու»):

Հաջորդ քայլը գիտակցված զգացումը արտահայտելն է խոսակցին, որն իր մտքում երևակայության միջոցով վերահագմում է այն և Հասկանում: Իսկ արտահայտումը լեզվի միջոցով է: Այնուհետև Կրոչեի օրինակով, գուցե ավելի խիստ, Քոլլինզովուդը քննադատում է նորմատիվ քերականությունը և տրամաբանությունը, որոնք դործում են նույն օրենքներով (տես՝ Ֆրանսիացի նշանավոր ստրուկտուրալիստ լեզվաբան, Հայագետ Բենվենիստի մոտ խոսքի մասերի և արխտոտելյան կատեգորիաների գրեթե նույնացումը):³ Խոսքը այստեղ վերաբերում է նրան, որ Հուզական կամ երևակայությամբ կառուցված լեզուն խոսում է Հակառակ այն պնդման, որ պետք է Հասնել մտքի կամ գաղափարի միանշանականություն: Ամեն բոպե ծնվում են իդիոմներ, որոնք ծնունդ են արտահայտիչ լեզվի և Հասկացվում են առանց բառարանի և քերականության:

Քոլլինզովուդը ոչ թե դեմ է լեզվի գիտականացմանը կամ ինտելեկտուալացմանը, որ ինտելեկտի աշխատանքն է՝ վերլիսելով Հույզերի արտահայտման երևակայական մակարդակից: Ընդհակառակը՝ ինտելեկտուալացված լեզուն չի նշանակում սոսկ չոր ուցիտոնալ միանշանակ լեզու, այլ նշանակում է Հույզերի նոր Հողավորում և Հարստացում ինտելեկտի մակարդակում: Այլապես, պոետները կամ նկարիչները կամ կոմպոզիտորները չէին բարձրանա զուտ Հոգեկան փորձի գիտակցման մակարդակից:

III գիրքը նվիրված է արվեստի տեսությունը, այսինքն՝ «բուն արվեստի», որ ի տարբերություն զվարճանքի և մոգություն՝ 1. արտահայտիչ է, 2. կերպարային է կամ երևակայական (երկու իմաստն էլ կա իմադրինատիվ բառի մեջ): Բուն արվեստը միջանկյալ մակարդակ է Հոգեկանի (զգացումներ, Հույզեր) և ինտելեկտուալի (միտք) միջև և չի կարող առաջանալ առանց Հուզական փորձի կամ ապրումի:

Ըստ Քոլլինզովուդի, քանի որ կա ճշմարիտ կամ խեղված գիտակցություն (խոսքը ոչ թե Հոգեկան խանդարման մասին է, այլ Հույզի ոչ լրիվ գիտակցման կամ գիտակցաբար այն խմբագրելու), ապա այն չափով, որ չափով արվեստագետն անմնացորդ է արտահայտում իր միտքը, այսինքն՝ այն Հասցրել է երևակայության կամ գիտակցության մակարդակի, այդ չափով էլ արվեստը լավ է: Բայց երբ արվեստագետը խուսանա-

վում է ինչ-որ բանից կամ նրան չի հաջողվում լրիվ գիտակցել իր ապրումը, ապա արվեստի գործը ձախողվում է: Զախողման կամ խուսանաման չափով էլ չի ստացվում արվեստի գործը: Նման ձախողում կարող է լինել ցանկացած արվեստագործի հետ: Այսինքն՝ վատ արվեստի գործը արվեստագործի կողմից այս կամ այն պատճառով հույզի ուրացումն է:

«Արվեստ և ճամարտություն» գլխում Քոլլինզվուդը եզրակացնում է, որ արվեստը գիտության նման չի փաստարկում՝ «սրան հետևում է սա» կամ «սրան չի հետևում սա», որն ինտելեկտի ասպարեզն է: Եվ քանի որ այն չի փաստարկում, ապա շատերին թվում է, որ արվեստը չի արտահայտում ճամարտությունը կամ էլ արտահայտում է մասնակի: Բայց ավելի խորաթափանցության դեպքում, ինչպես Լայբնիցի, որի մտքերը իր հետևորդներին հանդեպին էսթետիկայի որպես գիտության ստեղծմանը, արվեստը ևս արտահայտում է ճամարտություն, բայց ոչ ապացույցների ձևով:՝ Օրինակ, Ենքսպլիթի մի սոնետում աշխարհը սքանչելի վայր է, մեկ այլ սոնետում՝ թրքանոց և մահաբեր գոլորշիների մուժ, նույն լեզին մի անգամ առաքինության տիպար է, մեկ այլ անգամ՝ զժոխքի պես սև ու սովի պես ամայացնող:

Ենքսպլիթի դեպքում գործ ունենք պոետի հակասական տարրեր հույզերի հետ, այսինքն բանաստեղծի հայտնաբերած ճամարտությունը տվյալ եզակի ապրումի ճամարտությունն է, և ոչ թե ինտելեկտի: Դա ապրող աշխարհն է, որ պոետի հետ է, պոետի մեջ, դա նրա իրադրությունն է, որ այլ իրադրությունների հետ անիմաստ է խառնել: Այդ բարդ հուզական աշխարհը, որն արվեստագետի հետ մենք ել ենք վերապրում գրեթե նույնությամբ, կապված է նրա ինքնագիտակցության հետ: Այսինքն երևակայությամբ ընտելացված հույզերի հետ, ասել է թե՛ նա ճանաչել է իր հույզերը և իր ներաշխարհը՝ մինչև օրյեկտն ու սուբյեկտը զատելը: Հոգին, պսիխեն, հոգեկան աշխարհն ընտելացված է գիտակցությամբ: Բայց հույզերը միայն հոգեկան կամ զգայական աշխարհին չեն պատկանում: Հույզերով ու ապրումներով պակաս հարուստ չեն գիտակցական և ինտելեկտուալ մակարդակները, եթե չասենք՝ ավելի հարուստ: Ահա նաև մտքի և ինտելեկտի այդ հույզերի շնորհիվ արվեստագետը՝ պոետը, նկարիչը, կոմպոզիտորը, դերասանը

և այլն, ազատ ելումուտ ունի ինչպես Հոգեկան զգայական Հույզերի, այնպես էլ գիտակցական՝ երևակայության և ինտելեկտի Հույզերի ոլորտներում:

Արտահայտության բոլոր մակարդակներում (Հոգեկան, ինտելեկտուալ թե բարոյական) արվեստագետի երևակայությունը դրսևորվում է ամբողջական Համաձուլվածքով: Դանտեի գեպընում այն թոմխտական է և բյուզանդական իսխազմի ազդեցությամբ՝ Արեոպագիտիկաներով ներշնչված, ուրիշ խոսքով՝ Դանտեի աստվածաբանական ելակետը չի անջատվում «Աստվածային կատակերգության» տարբեր մակարդակներում, այլ ձուլված է ստեղծագործության արտահայտչականությանը: Նույնը վերաբերում է Նարեկացու «Վարդավառին» տաղում «գունդ, գունդ խաչածե գնդակ, յօրինւած երկնից շուրջանակ» տողերին, որ սերտ կապված է խաչի աստվածաբանության և խաչի Հետ կապված շրջանի և քառակուսու նեոպլոթագորական պատկերի միատիկական ցնծության Հետ:

Քանի որ լեզուն արտահայտվելու միջոց է ինչպես ինտելեկտուալ, այնպես էլ երևակայության մակարդակներում, իսկ արտահայտվելը զգացումի կամ ինտելեկտի Հույզի Հետ է կապված, ինչը ստեղծում է ոճ, ապա, ըստ մեր Հեղինակի, տարբերություն է կա լավ փիլիսոփայական երկի (պատմական, գիտական և այլն) և լավ պոեզիայի (չափածո, արձակ, կարճ թե երկար) միջև: Տարբերությունը լավ և վատ երկի մեջ է:

III գրքի վերջին՝ «Արվեստագետը և Հասարակությունը» գլուխը բարդությունների Հետ է կապված, գուցե և անլուծելի, և բովանդակում է արվեստագետի և Հասարակության, արվեստագետի և արվեստագետի, դրամատուրգի և դերասանների, կոմպոզիտորի և կատարողների Հարաբերության, արվեստագետի և լսարանի, ինչպես նաև այսպես կոչված էսթետիկական ինդիվիդուալիզմի խնդիրները: Արվեստագետի և արվեստագետի Հարցը Հանգում է «բանազոդության» խնդրին: Վերջինս XIX դարից ի վեր դարձել է դրեթե «քրեական» խնդիր, որ Հուզում էր նույնիսկ Սեզանի պես մեծ վարպետներին: Եվ այն, ինչը օգտվելով Վերածննդի արվեստի մեծ գիտակ Բեռնսոնից Քոլլինգվուդը Համարում է «չոշափողական» արժեք Սեզանի արվեստում, նկարիչը պարտական է Դոմինին և, Հավանաբար, Հակաբեռներ Համարված էնդրին ու Դելակրուային: Դա այն

է, որ վարպետին չեն բավարարում տեսողական, մթնոլորտա-
յին, օրվա փոփոխական պահերի բացահայտման իմպրեսիոնիս-
տական խնդիրները: Նա մոտեցնում է Հեռուն, գունային ցայ-
տունության և աղոտության խնդիր չի դնում Հեռվի և մտի
պլանների մեջ, նրա Համար ամեն ինչ՝ թե՛ տանձը, թե՛ ծաղիկը,
թե՛ մարդը, դառնում են Հավասարաբեք «մոտիվներ»: Այս բա-
ները անելիս Սեզանը Հաշվի չէր նստում ո՛չ իր նկարիչ ընկեր-
ների, ո՛չ գրող ընկերների, ո՛չ դիտողի, ո՛չ էլ ընդունող Հանձ-
նաժողովի կարծիքի Հետ: Բայց նա խիստ մտահոգվում էր, որ
Գոգենը մինչև Թաիթի գնալը դուրսոր Գաշի մոտ դիտելով
իր նկարները՝ ինչ-որ բան իրենից յուրացնում էր իր սեփա-
կան գեղարվեստական լեզուն զարգացնելու Համար: «Գոգենը
գողանում է իմ փոքրիկ զգացումը», - բողբոջում էր նա: Իսկ
ինքն իր Հերթին «գողանում» էր Պուսսենի, Լորրենի, Դոմիեի,
Պիսսարոյի «փոքրիկ զգացումները»:

Քուլինգվուդն, ընդհակառակը, խրախուսում էր նման
«գողութունը»: Իրոք 1930-ական թթ., Հայտնվեցին նոր պոետ-
ներ ու դրամատուրգներ, որոնց գրվածքները սկսեցին Հիշեցնել
անտիկ դասական շրջանի և էլիզաբեթյան շրջանի դրամատուրգ-
ների գործունեությունը, երբ ո՛չ Նվրիպիդեսը, ո՛չ էլ Շեքսպիրը
ոչ մի նշանակություն չէին տալիս, թե ումից ինչ սյուժե էին
վերցնում, կամ ումից ինչ դիալոգ՝ իրենց «գեղարվեստական
արտահայտություն» Համար: Լին կտակարանի, անտիկ կամ էլի-
զաբեթյան շրջանների դրամատուրգիայի, Տուրգենևի, Ֆլորբերի,
Տոլստոյի և Դոստոևսկու, նույնիսկ գրեթե ժամանակակից Կաֆ-
կայի և ուրիշների սյուժետային, էպիկական, ողբերգական, Հո-
գեկան, գրոտեսկային ոլորտները Հայտնվեցին Թոմաս Մաննի,
Փիրոզուի, Ջոյսի, Անույի, Քամյուի, Սարտրի և ուրիշների երկե-
րում: Ահա թե ինչու Քուլինգվուդը Հաճախ է բերում Թոմաս
էլիոթի պոեզիայի օրինակը, որտեղ ինչքան ասես «քաղվածք-
ներ» կան, բայց ամբողջության մեջ այդ պոեզիան մերկացնում
է իր ժամանակի մարդու, Հատկապես անդլիացու և ամերիկա-
ցու ողբերգությունը, Հոգեկան ամայացումն ու մանրացումը,
որը Հենց բանաստեղծի ապրումն էր:

Արվեստի դերի և բուժիչ Հատկությունների մասին նուտա-
յով է ավարտվում աշխատությունը. «Արվեստը բժշկում է ամե-
նավատ ախտից՝ տկարամտությունից, գիտակցություն խեղու-

մից»։ Պոետի միակ գեղամիջոցը իր բանաստեղծութունն է։

Անշուշտ XX դարում էսթետիկական շատ տեսություններ կան, որոնք, ինչպես իր ժամանակ շեղվել, արվեստի մահ են գուժում, ելնելով այն բանից, որ ինքնատիպության մրցավազքում և առևտրական աժիոտաժի մեջ արվեստը կորցնում է իր նախկին ջինջ «կատալյան» ակունքները։ Քոլլինզվուդը պարտավոր է էր իմանալ ամեն մի գեղարվեստական իրադարձություն։ Բայց ներքին ապրումների արտահայտման պաթոսը, որ հանգում է Հաջողված կամ այս կամ այն չափով ձախողված արվեստի գործի, իրենից բացի Հետաքրքրում էին պրակտիկ արվեստագետներին, որոնցից մեկը Կանդինսկին էր։ Վերջինս Մյունխենում իր կազմակերպած «Աշնանային սալոններում» ցուցադրում էր ոչ միայն Մատիսի, Բոննարի, Սինյակի, Դելոնեի, իր և ընկերների գործերը, այլև Հոգեկան Հիվանդների, երեխաների և Աֆրիկայի ու Խաղաղովկիանոսյան կղզիների այսպես կոչված «վայրենի», իսկ իրականում առողջ և բանական ժողովուրդների ստեղծած գեղարվեստական նմուշները։ Այդ փորձը օգտակար եղավ նաև դադաիստների, սյուրռեալիստների և այլ ուղղությունների կազմակերպիչների Համար, մինչև դրանց Հավաքվելը ազդադրական թանգարաններում և պատկերասրահներում, որտեղ դրանք կտրվեցին կենդանի Հաղորդակցության Հողից։

Քոլլինզվուդի արվեստի տեսությունը, ինչպես և մետաֆիզիկայի, պատմության. լեզվի տեսությունները Հավանաբար մի ակունքից են սերում և ծավալվում Համապատասխան ուղղություններով։ Այդ առումով նրա, ինչպես և Կրոչեի էսթետիկական տեսությունները, սնվում են շեղվյալ ակունքից։ Բայց խնդիրներից շատերը թարմ են։ Այսօր էլ մեծ է Հետաքրքրությունը նրա՝ արվեստի (և ոչ միայն արվեստի) տեսության նկատմամբ։ Նրա արժարժած խնդիրները ակադեմիական և Համալսարանական գիտնականների քննարկաման առարկա են։ Այսօր էլ նա, ինչպես և իր ուսուցիչ Կրոչեն, գեղարվեստական ինտուիցիայի իրենց տեսությամբ, որ նաև վերաբերում է լեզվին, ալեկոծում են մարդկանց մտքերը։ Նրանց առաջադրած Հարցերն են քննարկվում Գլազգոյի Համալսարանի պրոֆեսոր Գարի Քեմփի «Կրոչե-Քոլլինզվուդի տեսությունը որպես տեսություն» Հոդվածում՝ 2006 թ., Stanford Encyclopedia of Philosophy:⁵

Քոլլինզվուդի քննախոսությունը, ըստ Գարի Քեմփի, անգ-

լերեն զբոված ամենակարևոր տրակտատներէց է, սկսած ռոման-տիկ Բյորկից, որը գեղեցիկի Հասկացութիւնը բխեցնում էր ոչ թե կարգից և Համամասնութիւնից, այլ զգացումից և բնագ-դից, այսինքն գիտակցութեան շնմից:

Թե՛ Կրոնի, թե՛ Քուլինգվուդի տեսութիւնը Համառոտ է: Եվ քանի որ չի ընդարձակված նմանողութեան, ձևի տեսութեան, ընտանիքային, էսթետիկական և սեմանտիկական ինֆորմացիա-ների, արվեստի և պրոպագանդայի, արվեստի քաղաքական և տնտեսական Հիմքերի և այդ բազիսի վրա որպես վերնաշէնք նրա զբոված դիրքի և այլ Հարցերի քննութիւնը, ապա բազ-մապիսի ինչուները շարունակվում են: Արվեստի և գրականութ-յան քննադատութիւնն ու տեսութիւնը որոշ չափով և միայն կոնկրետ դեպքերում կարող են տալ քիչ թե շատ զոհացնող պատասխաններ:

Քուլինգվուդի ճիշդ՝ ցույց տալու, որ մոգութիւնն ու նմա-նակումը արվեստ չեն, Հույն սոփեստները չէին Հասկանա. Գոր-դիասի Համար պատրանքը, որ մոտ է նմանակմանը՝ միմեսիսին, և մոգութիւնը կազմում են արվեստի Հենքն ու Հյուսվածքը:⁶ Քուլինգվուդի Համար այդ դեպքում էսքիլոսի «Պարսիկները» պիտի Համարվեն մոգական, իսկ Արիստոփանեսի «Ամպերը»՝ միմեսիսի և առողջ բանականութեան տեսակետից Սոկրատեսի գործունեութեան նպատակադրված երգիծական քննադատութ-յուն: Առաջինը խթանում է Հույների Հպարտութիւնը պարսիկ-ների նկատմամբ իրենց Հայրենասիրական և բարոյական առա-վելութեամբ, այսինքն՝ Թատրոնի մոգութեամբ նրանց փորձում է զգաստ պահել, երկրորդը Սոկրատեսին քննադատում է Հենց՝ այն բանի Համար, ինչի Համար Պլատոնի դիալոգում Սոկրատե-սը իր քաղաքից վտարում է նմանակող և զվարճացնող պոե-տներին, պահելով միայն այն պոետներին, որոնք իրենց խելացի զրույցով օգտակար են դառնում քաղաքին: Այսինքն, ըստ Արիս-տոփանեսի, Սոկրատեսը ևս այդ պոետների նման շառլատան է, քանի որ ապացույցի զենքը տալով իր աշակերտներին՝ նրանց մղում է միայն ծուլութեան և օգտակար, օրինակ գյուղատնտե-սական, աշխատանքներից խուսափելու: Ուրեմն թե՛ Էսքիլեսը, թե՛ Արիստոփանեսը ստեղծում են «մոգութեան» արվեստ խա-ղային իրադրութեան միջոցով, այսինքն ոչ իսկական արվեստ: Եվրիպիդեսին առասպելի տարբերակները թելադրում են, թե

իր տրագիդիան ինչից է սկսվելու և ինչով է ավարտվելու: Գյոթեն «Ճառուստը» գրելիս (թեև օգտվում էր լեգենդի մշակումներից) կամ Տոլստոյը «Աննա Կարենինան» գրելիս չգիտեին, թե հրանք ինչպես են ավարտվելու, քանի որ երկուսի համար էլ անսպասելի էր իրենց ողբերգություն կամ վեպի ավարտը: Հետևաբար «Ճառուստը» և «Աննա Կարենինան» բուն արվեստի գործեր են:

Կրոչեն նույնացնելով արվեստը և լեզուն իրրե ինտուիցիա և արտահայտություն, ավելի հեշտ է լուծում խնդիրը. քանի որ արվեստի գործը արտահայտություն է, ապա նրանում տեղ գտած ճարտասանությունը, հնչյունային գործիքավորումը, գիտական նյութերի առկայությունը կամ գիտական կոաչումները, սյուժետային ստանդարտ պատումները, որ կարող են կրկնված լինել տասնյակ բանաստեղծների, նկարիչների, քանդակագործների մոտ, դասական և ոչ դասական ֆորմալ, ստանդարտ հնոտիները (ռուտինա), նրանցում տեղ գտած մաթեմատիկական, տեխնիկական, անատոմիական, հոգեբանական, սոցիալական, արտադրական և ամեն տեսակ գիտելիքները կորցնում են իրենց գործնական նպատակները և ձուլվելով գեղարվեստական արտահայտությանը՝ կազմում են նրա անկապտելի օրգանական մասը:

Նման գաղափարները դժվար է գործադրել բազմադարյան արվեստի ամենաբազմազան գործերի նկատմամբ. ցույց կարել են անձամպատկերներում, ասենք, 20 հազար տարի առաջ, ժայռապատկերներում՝ 5-6 հազար տարի առաջ, Կրետեում՝ մոտ 3,5 հազար տարի առաջ, միջնադարում, Հոլանդական արվեստում, ցուլին տեսնում ենք Գոյայի յուղաներկ և վիմազիր գործերում, Պիկասսոյի բազմապիսի էքսպերիմենտալ, ալյաբանական և վերարտադրողական շտուդիաներում, և երևի այնքան ժամանակ ցույց կնկարեն, քանի դեռ գոյություն ունեն մարդը և ցուլը: Ինչպե՞ս վարվենք այդ հազարավոր ցլերի պատկերների հետ՝ դրանք ինտուիցիայի, թե՞ նմանակման կամ ոճավորման, ցուլի նկատմամբ կարեկցանքի, թե՞ թշնամական վերաբերմունքի արդյունք են: Պլատոնը, բանաստեղծին մերժելով որպես նմանակողի, նրան իր «Խնջուկում» և «Իոնում» դարձնում է աստվածների և մարդկանց միջնորդ, մոտավորապես նույնպիսի առաքելություն հատկացնելով երաժշտության

նը, սոփեստները՝ ավելի շուտ:՝ Եվ երբ պոետը շոկ է ապրում, շոկի մեջ է գցում նաև Հանդիսատեսին: Աստվածային ներշնչանքը աստվածաբանները վերապահում են մարգարեներին և սրբերին: Անտիկ Անթուոգիայի պոետները և Պլատինոսը ներշնչանքը վերապահում են նաև քանդակագործներին և նկարիչներին. աստված իր պատկերը պատրաստում է Ֆիդիասի գլխում, և այդ պատկերի Համաձայն Ֆիդիասը կերտում է Ջևսի տպարը կոպիտ քարաքեկորից: Աստծո տեղը Քոլլինգվուդի մոտ գրավում է «զգացումների կամ Հույզերի Հորձանքը», որոնք գիտակցվելով երևակայության միջոցով դառնում են դադափարներ (Ղյում) և արտահայտվում: Եվ երևակայության այդ աշխատանքը կազմում է մտքի ու ինտելեկտի բազիսը: Բայց և՛ Կրոնի, և՛ Քոլլինգվուդի դեպքում արվեստագետի Հետ կապված միստիկան՝ խորհուրդը, վերանում է և ստանում պարզ (զգացումներ և Հույզեր) արտահայտություն, որտեղ չեն կարող անջատել զգացումը և ինտելեկտը, անատոմիան և մաթեմատիկան, գույնը և շոշափողական արժեքը և այլն, ինչպես ուղեղը մարդու գլխից Հանելով նրանում ոչ մի միտք չեն գտնի:

Կրոնի և Քոլլինգվուդի ու նրանց Հետևորդների տեսությամբ ո՛չ էսթետիկական կատեգորիաները, ո՛չ սեմիոտիկական ուսումնասիրությունը, ո՛չ իկոնոգրաֆիան կամ իկոնոլոգիան՝ պատկերազրույթունը կամ պատկերաբանությունը, չեն մոտեցնում արվեստի ըմբռնմանը և էությունը:

Մինչդեռ և՛ այսօր, և՛ անցյալում արվեստը միշտ էլ մատուցում է իր պարագոքսները: Եվ Ռիլկեի, Մարիտենի, Հայդինգայի նման մտածողների մեջ նորից Հարություն են առնում սոփեստների ու Պլատոնի ուրվականները: Պարզվում է, որ եթե այսօր Աստծուց, Սուրբ Հոգուց ու Հրեշտակներից ներշնչված մարգարեներ և սրբեր չկան, ապա նրանց փոխարեն մարգարեանում են «անիծված» պոետները՝ Բողիերից ու Ռեմբոյից մինչև Թրակլ ու Ցելան, մինչև ամերիկյան բիթնիկ պոետները՝ Գինզբերգը, Ֆեոլինգետին, Քերուակը և այլն: Եվ ոչ ոք չի կարող ասել, թե մի քանի Հարյուր տարում սերունդների ջանքերով կառուցված գոթական տաճարի արտահայտչականությունը որ ճարտարագետին, քանդակագործին, որմնագրին, ապակենկարողին է պատկանում:

Եվ ճիշտ է Քոլլինգվուդի կողմը՝ Թաղել ինդիվիդուալիզմը,

ազատվել «հողոսկրն աշտարակի» անեծքից, միավորել արվեստագետներին ջանքերը, արվեստագետներին ու լսարանի ջանքերը, կոմպոզիտորի ու կատարողի ստեղծագործական ջանքերը: Բայց միևնույն է՝ հրքեք չես Հասկանա՝ արվեստը մեռցնու՞մ է, թե՞ ապրեցնում, դաստիարակու՞մ է, թե՞ բարոյալքում, Հումանի՞զմ է, թե՞ մարդաստայացութուն, առևտու՞ր է, թե՞ ստեղծագործութուն: Եվ Դալիի ու Պիկասսոյի նման արվեստագետները այն ժամանակ էին մեծ, երբ նույնիսկ ներկերի լրիվ կոմպլեկտ չէին կարող գնել, թե՞ երբ նրանց ամեն մի խզրզոց առասպելական գին է ստանում: Եվ այսօր արվեստագետն է ստեղծագործում, թե՞ նա, որ մի քանի կոպեկով նրան խաղացնում է մատների վրա, նրա՞նք, որ միլիոններ են ստանում Հոլիվուդի արտադրանքից և թրիլլերների ու պոպ երաժշտության ուղեղահուզական լվացումից, թե՞ նրանք, ովքեր, մի քանի գրող էլ չստանալով, ընկերների օգնությամբ ստեղծագործում են նաև բանտում, ինչպես Փարաջանովը, թե՞ ստեղծագործում է ճաշակը, որ ոչ թե ընկեր չունի և կամայական է, այլ ունի քմահաճ և շահագրգռված ընկերներ, որոնց քիմքին ստիպված է Հարմարվել արվեստագետը, բացի կյանքից Հրաժարված մի քանի բացառություններից: Ամեն օրենք ունի բացառություն: Եվ դժվար է ասել կրոչե-Քոլլինգվուդի տեսությունը օրինաչափությամբ է վերաբերում, թե՞ բացառությունների: Ինդիվիդուալիստ կուրիստները կողք-կողքի ցուցադրված նույնքան ստանդարտ ու ակադեմիական են Հնչում, որքան Հարյուրամյակներով միմյանց կրկնող սրբապատկերները, և երբ նոր գեղարվեստական արտաճայտություն է երևան գալիս, կուրիզմը վերանում է՝ ըստ Հեգելի վերաուվելով այդ նոր գեղարվեստական երևույթի մեջ, ինչպես Սեզանն է վերաուված կուրիզմում: Ընդ որում՝ կուրիզմը այլ բան է, քան սեզանիզմը, իսկ երկրաչափական արտաբացիտիզմը լրիվ տարբեր է կուրիզմից: Այս է պարադոքսը: Արվեստը և՛ ձև է (Ֆորմալիստներ), և՛ կամք է (Ալոիզ Ռիպլ), և՛ արտաճայտություն է, և՛ ստրուկտուրա, և՛ Հաջողված, և՛ ձախողված, ինչպես պատահում է նաև գիտական շարադրանքում կամ որևէ Հաջող կամ անՀաջող բանաձևում:

Ամփոփելով մեր խորհրդածությունը Քոլլինգվուդի քննախոսությունից շուրջ՝ դիմենք Կանտին, բոլոր նշանավոր փիլիսոփաների փրկարարին: Խոսքը վերաբերում է 1798 թ. նրա Հրա-

տարակած «Մարդաբանությունը պրագմատիկ տեսակետից» աշխատութեանը: Ծաշակը որպես դատողութեան էսթետիկական ունակությունն ոչ թե զգայութեամբ առարկայի նյութական պատկերացումն է, այլ ազատ կամ պրոզուկտիվ երևակայությունն է այդ նյութականը համակում ստեղծագործութեան, այսինքն ձևի օգնութեամբ,⁸ «քանի որ միայն ձևը կարող է համակննել լինելու ընդհանուր կանոն բավականութեան զգացումի համար: Հոգեկանը (Քոլլինզվուդի մոտ զգայականը կամ հոգեկան մակարդակը — Վ. Ղ.), որ կենդանանում է գաղափարների միջոցով, ոգին է: Ծաշակը կարգավորում է՝ ձևի մասին դատողութեանը միացնելով բազմազան երևակայութեան մեջ, իսկ ոգին a priori երևակայութեան այդ ձևի համար տալիս է օրինակ»,⁹ ոգին ստեղծում է գաղափարներ, ճաշակը՝ դրանք սահմանափակում հանուն ձևի, ըստ «պրոզուկտիվ երևակայութեան» օրենքների, և ստեղծում ի սկզբանե (չնմանակելով): Ոգին և ճաշակը ի հայտ բերող պրոզուկտն էլ պոեզիան է, ինչպես նաև գեղարվեստները:¹⁰

«Միմեսիսի» արիստոտելյան տեսութեանը սասանվեց Ֆիլոստրատոս Ավագի կողմից («Ապոլոնիոս Տիանացու կյանքը»), փոխվելով «երևակայութեան ստեղծագործութեան»: 1725 թ. Ջամբատտիստա Վիկոն նկատում լույս տեսած իր «Նոր գիտութեան» մեջ զարգացրեց իր իսկ մշակած «երևակայութեան տեսութեանը»՝ պոեզիան նախորդում է ինտելեկտին, բայց հետևում է զգացումին:

Եվ Քոլլինզվուդին վերաիմաստավորելով, Վիկոյի հետ կարող ենք ասել երևակայութեան ուժով որոշ ստեղծագործողների մասին՝ Հոմերոսին է պատկանում, անշուշտ, իմաստութեանը, բայց միայն բանաստեղծական իմաստութեանը¹¹, և կրկնել Կանտին՝ ոչ միայն բանաստեղծների, այլև գեղեցիկ արվեստների բոլոր ներկայացուցիչների համար կարելի է ասել. լավ բանաստեղծութեանը հոգու կենդանացման ամենահզոր միջոցն է. իսկ դրա համար պետք է ծնվել, և դրան չի կարելի հասնել միայն ջանասիրութեամբ և նմանակումով. և այն, ինչ արվում է դեղատոմսերով և կանոններով, անհոգի է, սարկական...¹²

1. Խնդրի Հիանալի մեկնարանումը ա՛նս Ա.А. Адамян, Вопросы эстетики и теории искусства, М., 1971, стр. 272.
2. Մենք Քլայիզիզմի Հետ այստեղ չենք անջատում զգացումները Հույզերից, որովհետև գրանց ազդեցությունը ստովան է սկենսականությունը՝ ըստ Լեյբի կամ Դեկարտի:
3. Բնեմենիտը երբեք չէր կարող դուրս գալ նորմատիվ քերականության գեմ, բայց նա գործածում է սմտքի արտահայտությունն արտահայտվածությունը, որը նման է ազգացումների կամ Հույզերի արտահայտությանը, որն իր մարմնավորումը գտնում է լեզվում: Արիստոտելի կատեգորիաները, որոնց շնորհիվ բացատրվում է դոյլը կամ է-ն, պեղզի Հիմնական և ելակետային կատեգորիաներն են՝ ըստ լեզվաբանի (Э. Бенвенист, ОБЩАЯ ЛИНГВИСТИКА, "Прогресс", М., 1974, стр. 104-114).
4. Տե՛ս Գ. Վ. Լայբնից, Մետաֆիզիկական երկեր, 2001«Սարգիս Խաչենց», Ե., էջ 39-41, 83-84: Խոսքը վերաբերում է իմացությունների բազմապատկանությանը՝ ազոս, Հստակ, ազեկվատ, կատարյալ և այլն: Լ. Վենտուրին գրում է, որ 1684 թ. Լայբնիցը նկատում է, որ եկարիչները և այլ ստեղծագործողներ թեև լավ են դատում արվեստի գործերի մասին, բայց Հարցերին զմտարանում են պատասխանել: Նման իմացությունը պարզ է, բայց ոչ ուսցիոնալ (L. Venturi, History of Art Criticism, New York, 1936, p. 118): Դատողությունների այդ բնագավառը, որ կապված է Հույզերի, Թովչանքի և ներդաշնակության Հետ, այսինքն այս դեպքում արվեստի գործերի Հետ, Բաուսդարաններ անջատեց իրրն «էսթետիկա»:
5. Gary Kemp, The Croce-Collingwood Theory as Theory, The Journal of Aesthetics and art Criticism, 61:2 spring 2003 (p. 171-193).
6. Տե՛ս W. Tatarkiewicz, A History of Six Ideas: An Essay in Aesthetics, 1980, Warszawa, p. 95.
7. Տատարկեիչ, էջ 197 և Հետո:
8. И. Кант, Соч. В шести томах, том 6, "Мысль", М., 1966, стр. 484.
9. Եույն տեղում, էջ 490:
10. Եույն տեղում, էջ 492:
11. Տե՛ս B. Croce, Aesthetics as Science of Expression and General Linguistic, New York, 1955, p. 220, 223.
12. Տե՛ս Կանտ, Եույն տեղում, էջ 492: